

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2012թ. նոյեմբերի 2-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) ԵՄ շարժունակության գործընկերություն «Հայաստանում և Վրաստանում փորձերի փոխանակում» խորագրով պանելային քննարկումներին,
- ✓ 2012թ. նոյեմբերի 3-9-ը ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Մարտիրոսյանը և նույն վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել են ք.Նյու Դելիում (Հնդկաստանի Հանրապետություն) կայացած «Ընդլայնված Դեվի՝նֆո» խորագրով դասընթացին,
- ✓ 2012թ. նոյեմբերի 6-8-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը և գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը այցելել են ք. Քիշնև (Մոլդովա) գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնախնդիրները ուսումնասիրելու նպատակով,
- ✓ 2012թ. նոյեմբերի 5-9-ը ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Էներգետիկ վիճակագրություն» խորագրով դասընթացին,
- ✓ 2012թ. նոյեմբերի 18-21-ը ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Ժնեվում (Շվեյցարիա) կայացած «Կլիմայի փոփոխությանը վերաբերող վիճակագրություն արտադրողների և սպառողների համար» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. նոյեմբերի 19-23-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը

մասնակցել է ք. Անթալիայում (Թուրքիա) կայացած «Թուրքիայի, Արևմտյան Բալկանների և Կովկասյան երկրների բնական կապիտալի հաշվառում և էկոհամակարգերի ծառայությունների գնահատում» խորագրով սեմինարին,

- ✓ 2012թ. նոյեմբերի 19-23-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Մ. Ծատուրյանը մասնակցել է ք. Տիրանայում (Ալբանիա) կայացած «Հազարամյակի զարգացման նպատակների համար կրթության ցուցանիշներ» խորագրով սեմինարին,
- ✓ 2012 թ. նոյեմբերի 21-22-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ղեկավար կոմիտեի նիստին,
- ✓ 2012թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի վիճակագիր Ե. Գևորգյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Ժառանգաբար փոխանցվող արհեստները՝ զարգացման ընդհանուր հարթակ» ծրագրի շրջանակում «Մշակույթի ստեղծագործական արտադրությունների բնագավառում երկրի քաղաքականությունը» թեմայով կլոր սեղանին և «Մշակութային վիճակագրական գործիքներ. Միջազգային ստանդարտները և տեղական առանձնահատկությունները» թեմայով սեմինար-քննարկմանը,
- ✓ 2012 թ. նոյեմբերի դեկտեմբերի 10-11-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Բանգկոկում (Թայլանդ) կայացած «Ասիայում և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներում քաղաքացիական կացության գրանցումների համակարգ և բնական շարժի վիճակագրական տվյալների բարելավում» խորագրով բարձր մակարդակի հանդիպմանը,
- ✓ 2012թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Լյուքսեմբուրգում (Լյուքսեմբուրգ) կայացած «Վիճակագրական համագործակցության համար ԵՀՔ - Արևելքի ռազմավարության համար» աշխատանքային խմբի հանդիպմանը,